

Զ. ՄԵԼքՈՆՅԱ



ZULU - 1947

6

891.99

Л-53 Ульяновск 29246.

33.01.1974, Q.
Unbländbarkeit, bl

~~Springigkeit, hängt von~~ 10m.

A grid of 12 horizontal lines on a yellow background, used for handwriting practice. The grid consists of 11 horizontal lines spaced evenly apart, with a single vertical line intersecting all of them. The grid is oriented diagonally from the top-left towards the bottom-right.

0

W

2

0

W

2

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԱՐԵՎ ՄԵԼՔՈՆՅԱՆ

391.99
5 - 53

Մrs. Gladys Chapman
Հայոցիներ.

ԽԱԿԱԿՈՒՄ է 1981 թ.

Հայոց Ովագուն
Հայոց 20-4-47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏԾՈՒՅՑ

A 11 229246
28566

1947
ՏԱՐ - ՍԱՀԱԿԲԱՆ
ZULU

11

ԶՐՅԵՂԵՂԵՆ ՀԵՏՈ

ՈՒ երբ զուրերը կատաղի, հանդարտեցան
եվ սկսան ալ նվազիլ,
Նոյան-Տապանը վիթխարի
Նստավ հանդարտ՝
Սեգ զագաթին Արարատի:

ԵՎ աղավնին երբ դարձավ ետ
Չիթենիի շյուղը բերնին՝
Նոյ բացավ դուռն իր Տապանին:

Թեվ մը ինչպես գուրզուրացող՝
Ծիածանի կամարը նոր,
Երկիրն ամբողջ գրկած հիմա,
Չայն կղներ նոյի՛ն առաջ:

Ի՞նք՝ ընտըրյալը բախտավոր,
Կեցած մինակ Արարատի սուրբ կատարին,
Նայեցավ լո՛ւռ, իր դեմ բացվող աշխարհներուն անպարազիծ . . .
Տեսավ խումբերը մարդերուն
Որոնք պիտի լեցընեին երկիրը նոր՝
Նո՛ր կյանքերով:
Տեսավ հնո՛ցն աշխատանքի,
Որու բոցին մեզ սրբազան, պիտի գային հալիլ իսպա՛ռ՝
Քե՛ն, ոխ, ոճի՛ր ու եսություն:
Լսեց արդեն հողին բերրի ծոցեն ելլող
Հրավերի երգե՛րը գաղջ:
Չգաց երա՛զն իր վաղեմի՛ իրա՛վ դարձած,
Դեռ երեկի այս հանցապարտ հողին վրա:

Ու հոն մինա՞կ, Արարատի վեհ կատարին,
Նոյ նահապետը երջանիկ,
Լուս, ծնրադրեց արտասվալից . . . ,
Բայց չտեսավ,
Ե՛ր իսկ մարդոց արյունին մեջ արդեն ներկա,
Նախասերմերն Աշտարակին բարելոնի:

* * *

Ու երբ զուրերը կատաղի Արդարության Զրհեղեղին,
Նորեն ահա, ամենուրեք,
Քանդած ամեն թումբ ու պատվար, եվ Աշտարակ' կ Բաբելոնյան,
Կվոթորկին . . . ,
Տեսե՛ք, տեսե՛ք,
Մեկի փոխան հազա՞ր Տապան
Զուրերուն հետ կրարծրանան . . .

. . . Ու վա՛յ անոնց,
Որոնք վտիտ հաճույքներու փոխան՝ կրցան
Մոռնա՛լ պատիվ ու հարեվան:
Ու վա՛յ անոնց,
Որոնք իրենց կանթեղներուն համար միայն,
Զգած նաճանչը լամբերուն ելեկդրական,
Նկուղներու մեջ ապրեցան:
Ու վա՛յ անոնց,
Որոնք բուի աչքե՞ր առած,
Խավարներու ժանգին զերի, արեվի՛ն դեմ հայիոյեցին:
Ու վա՛յ անոնց,
Որ նորին հետ նորոգվելու չեղա՞ն ատակ,
Որ սարսափած Ապագայեն՝
Իրենց խախո՛ւտ անցյալին իսկ բեկորներուն վերադարձան:
Ու վա՛յ, ու վա՛յ, ու վա՛յ անոնց,
Որոնք գալիք Զրհեղեղին ծայնը հեռվեն չլսեցին,
Որոնք իրենց սիրտն ու հոգին մեծ-իղձերով չլեցուցին,
Որոնք ամեն հովի դիմաց, Ե՛ր Մեծությամբ առագաստներ
Չպարզեցին,

Որովհետեւ

Անոնք որոնք չքալեցին ժամանակին հետ համընթաց,
Անոնք որոնք Բարելոնյան Աշտարակնե՛ր կառուցեցին,
Վճիռին դեմ Զրհեղեղին,
Անոնք որոնք չունկընդրեցին տիեզերքի կամքը անթեք,
Ու թափալքին դեմ ջուրերուն
Մակույկներո՛վ ներկայացան՝
Անոնք բոլոր, տեսե՛ք, տեսե՛ք,
Մեկիկ-մեկիկ ջուրերուն տակ անդարձորեն կկորսվին:

* * *

Ու երբ ջուրերը փրփրադեզ, հանդարտեցան,
Եվ սկսան ալ նվազիլ,
Երկրագունդի չորս-ծագերուն՝
Ամե՛ն Մասիս իր գագաթի՛ն արփանանանչ,
Զգաց հանգչի՛լն իր Տապանին:



Դ Ա Ւ Ն

Արաք ազնիվ ժողովությին

Հալածակա՞ն ու անոթի,
Մեր աչքերուն մեջ շնությունն անպատմելի,
Արդարության - Իշխաններուն,
Ու քսությունն անչափելի.
Հոգիներուն աստվածավախ ու քաղքենի՝
Քեզի՛ եկանք,
Դանդաշելեն ու հյուծասպառ . . .

Դուն առի՛ր մեզ . . .
Տվիր երդիք ու առօրյա . . .
Աշխատանքի սուրբ կարոտով դողդղացող մեր ձեռքին մեջ
Դրիր մանգաղ, մուրճ ու կացին . . .
Հացեղ՝ բաժին, ու երկինքեղ տվիր արե՛վ,
Արեվագուրկ ու մերժված մեր գոյության:

Ու բրտինքի ամեն կաթիլ, որպես ծաղիկ բուրումնավետ,
Երբ ծլեցավ հողին ծոցին . . .
Ու հաջորդող գարուններու հասակին հետ,
Երբ բարձրացավ հասա՛կը մեր . . .
Ոսկեվորված աշուններու հունձքերնն երբ
Մե՛ր ամբարներն ալ լեցվեցան . . .
Ու երբ հնչեց վերադարձի շեփորը վառ՝
Դուն նույնքան վե՛հ, նույնքան ընկեր, նույնքան եղբա՛յր
Եղար մեզի:

Պայքարի լույս շավիղներեն անցանք մեկտեղ,
Ազատության դրոշին դեմ նույն հրճվանքով տողանցեցինք . . .,
Եվ արդ, երկաթ կամրջակեն մեր նավերուն,

Բեոցուցած սի՞րտ ու երախտիք,
Երբ կնայինք վերջին անգամ դեպի ցամաք,
Մեր նայվածքներն արտասվալի,
Հսկա նավե՛րն ալ մեզի հետ
Կարծես ափի՛ն կշղթայեն:

Քո՛ւ երակեղ ու երակեն Մեր հայրենի,
Մեր մեջ լեցվող
Երկնյուղանի երջանկություն մ'անհատնելի,
Իր ծանրությամբ — կարծես խարիսխ,
Մեր սրտերեն,
Զուրերուն մեջ դեռ կերկարի . . . :

Վերականգնած ու երջանիկ,
Երբ կմեկնինք,
Հին վերքերու սպին պիտի
Ամե՛ն ըռպե թարմացնե,
Մեր մեծ-պարտքին հուշը ոսկի . . . :



ԵՐԳ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Նավասարդյան սա տոներուն արեվավառ ։ ։ ։

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Ինչ ցավ զիտնալ թէ երազդ մարմին մը ունի ։ ։ ։

ԻՆՏՐԱ

Վերադարձի այս օրերուն հրաշավառ,
Երբ դարերու երազը՝ մեր առավ մարմին,
Երբ ինկավ լույսն ազատության մե՛ր ալ դեմքին,
Ներե՛, Երկիր իմ լուսավառ
Այս զավակիդ՝

Որ քու կանչիդ ահագնությանը փոխարեն,
Մյուս նժարին մեջ կշիռին քու դարավոր,
Դրավ տրցակ մը թոթովող ոտանավոր:

Ներե՛, Երկիր իմ լուսեղեն,
Այս զավակիդ
Որու բառերը դողահար,
Եղան ընդմիշտ անբավարար
Քու հասակիդ:

Ներե՛, Երկիր իմ կենսատու,
Եթե թեփերն անոր վտիտ ու անարյուն,
Երկարեցան պարփակելու լեռները քու,
Բայց գրկեցին՝
Իրանը փոքր իր Ներկային:

Ներե՛ անոր,
Երկիր իմ նոր,
Եթե ուզեց բիբերուն մեջ ապրեցնել

Քու հունծքերուդ հասունությունը ոսկեթել:
Եթե ուզեց տեսնել անդի՛ն հորիզոննեն՝
Ներե՛ իրեն:

Ներե՛ իրեն,
Եթե ուզեց ըլլալ տարբեր ուրիշներեն,
Քեզի՛ համար:
Եթե ուզեց իր ցաւերուն մեջ անհամար,
Զկորսվիլ
Քեզի՛ համար:
Եթե ուզեց աշխարհներուն մեջ այս օտար,
Տանիլ պայքար՝
Քեզի՛ համար:
Ներե՛ իրեն,
Եթե կրցավ քեզի համար՝
Դժբախտ ու խեղճ ըլլալ միայն:

Ներե՛ ինձի,
Վերադարձի արեվաշող այս օրերուն՝
Վերադարձիս եթե չեղա ես արժանի . . . ,
Եթե հոգիս օտարներու կնիքն ունի
Իր ձալքերուն . . . ,
Եթե գրիչն իմ տակավին կղողդղա
Վարանումով
Անկյանք ու խեղճ քերթվածներու մարմնին վրա:

Ներե՛, Երկիր իմ արեվկա,
Եթս միայն քեզի՛ համար ես ապրեցա . . . ,
Եթե մոռցա՝
Խինդը տարբե՛ր աշխարհներու տարբե՛ր մարդոց:

Ներե՛, Երկիր իմ ոսկեթոց՝
Այս եսամոլ քու զավակիդ վերադարձի՛ն ալ եսամոլ:

* * *

Ի՞նչ ցավ, գիտնալ թե անմարմին պիտի մնա
Երազդ քու:

Ի՞նչ ցավ, բնաւ
Զայն չսեղմել կուրծքիդ վրա:
Ի՞նչ ցավ, նայիլ անոր հեռվեն,
Եվ արտօնել որ մշուշներ
Զայն պարուրեն:
Ի՞նչ ցավ, ձգել որ ուրիշներ
Անոր տիրեն:
Ի՞նչ ցավ. զիտնալ թե անմարմին պիտի մնա
Երազդ քու, երկրի վրա:

Ի՞նչ խինդ, զիտնալ՝ թե ձե՛վ ունի
Ու թե մարմին,
Երազդ քու, մշուշային ու անմարմին:
Ի՞նչ խինդ, նայիլ քու երազիդ
Աչքերուն մեջ ականակիտ:
Ի՞նչ խի՞նդ անշեջ,
Փրփուրի տեղ, ափերուդ մեջ
Մեղմել հակինթ:
Ի՞նչ խի՞նդ անգին,
Հենիլ նյութին,
Ու լոկ նյութեն,
Պայքարելեն՝
Զգտիլ իրաւ ու նյութածին,
Մշտանորոգ քու երազին:

* * *

Ո՞վ Նաիրի՝
Պողպատաշեն, քարաքանդակ, վառողարո՛ւյր
Իմ Հայրենիք.
Ո՞վ Ուրարտու՝
Պղնձափայլ, արծաթածայն, աղամանդյա՛
Իմ Հայրենիք.
Ո՞վ Հայաստան՝
Սովետական, ոսկեղրվագ, շոշափելի՛
Իմ Հայրենիք:

Ա Ա Ր Ո Տ

Աշնան ցողին, նրբին զովին եմ կարոտ,
Հյուսիսի ցուրտ հովին, բուքին եմ կարոտ,
Այս ճակատիս կրակին դեմ՝ զովանալու,
Ես Մասիսի մաքուր ծյունին եմ կարոտ:

Ամրան տոթին, կրակ օդին եմ կարոտ,
Երազներու հուժկու տենդին եմ կարոտ,
Այս հոգիս սառույցին դեմ՝ չմսելու,
Երեվանի նոր արեվին եմ կարոտ:

Մտածումի ոսկի սույրին եմ կարոտ,
Ճշմարտությանց կանչող սոյլին եմ կարոտ,
Այս ուղեղիս պապակին դեմ՝ չլոելու,
Մտքի մարդոց ազնիվ սրտին եմ կարոտ:

Հոգիներու հերկին բերքին եմ կարոտ,
Ըսկերներու անգին երգին եմ կարոտ,
Ականջներուս պարապին դեմ՝ չվախնալու,
Անսուտ մարդոց անսուտ խոսքին եմ կարոտ:



Խ Ս Դ Ր Ա Ն Ք

Յավիս համար երեկի, ու ցավերուս ալ վաղվան
Ոչ-մեկ բողոք ունիմ ես,
Բայց, Կյա՛նք, այնպե՞ս մը ըրե, որ այս փոքրիկ աղջկան
Յավին՝ ցավեր չբարդես:

Զգե՛ որ ան բողբոջի, բայց եվ բողբո՛ջ միշտ մնա . . . ,
Մի՛ վերածեր ծաղիկի.
Մի՛ ծգեր որ հոգիիս տենդը թափեմ իր վրա,
Որ տառապի եվ բացվի:

Ինձմեն հեռո՛ւ պահե զինք, թող չհասնի այս ափիս,
Ափն իր անքիծ ու աղու . . . ,
Բայց ես զգամ թե ահա, կլեցընեմ իրմով զիս,
Առանց իրեն հպելու:

Այնպե՞ս ըրե, Կյա՛նք, այնպե՞ս, որ ի՛նք փոխվի, եվ կամ ես,
Որ չխեղղեմ իր հոգին . . . ,
Որ երբ հակի իմ կուրծքիս, հանկարծ այրող իմ ներսես,
Օտար ծայներ չլսվի՞ն:

Թող չվախնա ինձմեն, կամ՝ թող կարենամ ես հավետ
Բանտարկել ծայնն իմ ներքին,
Որ երբ քալե իմ քովես, ես կարենամ իրեն հետ
Խոսիլ մե՛ղմ ու ժպտագին:

Իսկ, Կյա՛նք, եթե պիտի մենք սիրենք զիրար՝ հակառակ
Տարբերության այս մեծղի,
Թող երազիս հասնելու այս տառապանքն անհատակ,
Ինձի այստեղ խնայվի՞:

Յավիս համար երեկի, ու ցավերուս ալ վաղվան,
Ոչ-մեկ բողոք կպահեմ . . . ,
Բայց Կյա՛նք, այնպե՞ս մը ըրե, որ այս փոքրիկ աղջկան
Յավին՝ ցավեր չբարդեմ:

ԵՐԿՈՒԻ ԳԻԾԵՐ

Ինչպես դեզ ու ոսկեզոծ երկու գիծեր զուգահեռ,
 Որոնք պիտի չհպին ոչ-մեկ ատեն իրարու,
 Որոնք սակայն հավիտյան պիտի սուրան աներեր,
 Ճեղքած հասակը անծիր բոլոր գալիք-դարերու . . .

Ինչպես զիրար տենչացող ոսկի գիծերն այդ երկու,
 Որոնք կանցնին նո՛ւյն թափով՝ ջուրեն, օդեն ու հողեն,
 Որոնք ընդմիշտ իրարմե ճիշդ նույն չափով են հեռու,
 Եվ նույն ոսկի տենչանքով հեռվեն զիրար կողողեն . . .

Այնպես ալ մենք՝ ես ու դուն, երկու գիծեր բոցավառ,
 Հանկարծ տարբեր կետերե՝ նո՛ւյն ուղղությամբ սուրացինք,
 Ու տակավին կսուրանք, ես՝ քեզ, ու դուն՝ ի՞նձ համար:

Պիտի անցնին բյուր դարեր, ու հող, ու ջուր, ու երկինք,
 Առաջվան պես պիտի գան իրարու մեջ լուծվելու.
 Առանց որ մենք հեռանանք, եվ կամ հպինք իրարու . . . :

ԹԱՆԿԱԳԻՆ ՎԵՐԱԴԱՐՁ

Գորգե՛ր, գորգե՛ր վտեմ ես, քայլերուդ դեմ, ի՛մ աղվոր,
Բույր ու ծաղիկ բռնեմ ես, զով շունչիդ դեմ, ի՛մ աղվոր,
Ու երբ նայիս դուն ինձի, ու մենք նայինք իրարու՝
Վառ արեվներ բռնեմ ես, աչքերուդ դեմ, ի՛մ աղվոր:

Երգով, պարով, քեզ նորեն, դիմավորեմ, ի՛մ աղվոր,
Արշալույսներ շարեմ ես, ճամբուդ եզրին, ի՛մ աղվոր,
Ու երբ հասնիս դուն ինձի, ու մենք հասնինք իրարու՝
Նոր դափնիներ դնեմ ես, ճակատիդ շուրջ, ի՛մ աղվոր:

Սերով, հույզով, թարշիշով պարուրեմ քեզ, ի՛մ աղվոր,
Բեհեզ ու շալ բռնեմ ես, մարմինիդ դեմ, ի՛մ աղվոր,
Ու երբ հենիս դուն ինձի, ու մենք հենինք իրարու՝
Խաչ ու մանյակ կախեմ ես, շեկ վիզիդ շուրջ, ի՛մ աղվոր:

Բայց երբ հուշի՛կ սպառին ճամբա ու երգ, ի՛մ աղվոր,
Հանկարծ կենանք հմայուն, մենության մեզ, ի՛մ աղվոր,
Մերկացնեմ զարդերեղ, մերժեմ ամե՛ն հարդարանք՝
Ու քեզ ինձմո՛վ զարդարեմ, առաջվան պես, ի՛մ աղվոր:



Դ.


ԱՆԱՐԺԵՔ ՄՆԱՑՈՐԴ

Մինչեվ շուրթիս երկարող՝ քեզմե անունդ մնաց,
Քեզմե՝ որու ժպիտին համար լա՛լ իսկ ուզեցի...
Մինչդեռ այսօր զարմացած, կհարցնեմ ես-ինձի,
Թե իրա՞վ է որ արդյոք միայն անունդ մնաց:

Կկարծեի թե ընդմիշտ պիտի ինձի պատկանիս,
Եթե նույնիսկ տարիներն իրենց մոխրոտ քայլին տակ,
Մեր արյունի հովանին դարձընեին ավերակ...
Կկարծեի թե ամբողջ պիտի ինձի՛ պատկանիս:

Նույնիսկ երբ զիս ծգեցիր ցավերուս մեջ առանձին,
Կխորհեի թե քեզմո՛վ միայն աշխարհ էր աշխարհ,
Ու ամեն բան իմաստե կպարպվեր համրաբար.

Սակայն այսօր դուն արդեն կպատկանիս անցյալի՛ն,
Ու անունեղ զատ ամեն անուն նվա՛զ ունի դեռ...
Մինչ անունիդ նվազին բոցը ի՛մ մեջ է մարեր:



Ե.

ԱՆՎԱԽՃԱՆ ՃԱՄԲԱՆ

Այս ճամբայեն
Քալել անձայն,
Ափերուդ մեջ փունջ մը վարսեն այդ աղջկան՝
Որ սիրեց քեզ,
Ի՞նչ փույթ եթե պահ մը միայն:
Քալել հալարտ,
Երազներուդ արելիներեն՝ արեվակեզ,
Անցնիլ դաշտեր ու անապատ . . . ,
Քալել արագ, քալել դանդաղ,
Բայց անպայման քալե՛լ, քալե՛լ,
Եթե նույնիսկ ըսեն քեզի,
Թե ճամբադ է մութ ու անել:

Ու գնացքիդ մեջ անսասան,
Ժպտիլ անցնող ամեն անձի,
Հոգիիդ մեջ շիթ մը ծայնեն այդ աղջկան՝
Որ սիրեց քեզ,
Ի՞նչ փույթ եթե պահ մը միայն:
Ու հետո լուռ ու ոսկերեռ,
Քալե՛լ, քալե՛լ,
Ճշմարտությանց դեպի սարերը բարձրաբերձ,
Եթե նույնիսկ ըսեն քեզի,
Թե այս ճամբան վախճան չունի:

Հանկարծ երգե՛լ,
Երգել անվախ ու անհաշիվ,
Մարմինիդ մեջ դող մը մարմնեն այդ աղջկան՝
Որ սիրեց քեզ,
Ի՞նչ փույթ եթե պահ մը միայն:

Ու հետո խենդ, վազե՛լ, վազե՛լ,
Մարգագետնին մեջեն ծլող երազներու
Հոգիիդ մեջ բույր մը բույրեն այդ աղջկան,
Եվ ավելուդ՝ հուշ ու կոկոն։

Ու չհասնիլ ո՛չ-մեկ մարդու, այլ ամենուն,
Անձրեվներու եվ ցավերու տարափեն վերջ,
Ի՞նչ փույթ, ի՞նչ փույթ,
Քանի հոգիդ ահա կուռի ու կհորդի,
Նոր սերերու համայնական սարսուռներով։

Խ Ս Ս Ո Ւ Մ

Երբոր կուզես թեվերուդ օղակին մեջ ու սրտիդ
Առնել աշխարհը ամբողջ, ու իր մարդերն անհամար . . . ,
Երբոր կուզես լույսի պես անհունանալ, ու հոգիդ
Որպես անգին բալասան զոհել ցավին իր համար,

Երբոր կուզես սավառնիլ ոլորտներեն ալ անդին
Ու նայվածքի մը նետով չափել Անհունը անհուն,
Հետո Դաղտնիքը անլուր տիեզերքի հորհուրդին
Երբոր կրղծաս նվիրել այս աշխարհի մարդերուն,

Բայց երբ անոնք չեն ուզեր լսել երգերը անգամ,
Որոնց մեջ դուն պահեցիր ինչ որ ունիս թանկագին,
Որոնց մեն-մի հունչին մեջ, սրտեդ շերտեր մնացին . . . ,

Ըսե՛, ընկեր, ի՞նչ կընես, կհամառի՞ս տակավին
Գիտակցորեն մաշելով շարունակել այս ուղին,
Ու միայն դուն ունկընդրել, հունչը երգիդ դառնահամ . . .
Իսկ ես, ընկե՛ր, խո՛սք բեզի, պիտի ընդմիշտ համառիմ։

ՊԱՐՏՔՈ, ԸՆԿԵՐ

Հնկե՛ր, եղբա՛յր իմ անծանոթ,
Դուն որ հիմա այս աշխարհի վրա կապրիս
Հեռու թե մոտ,
Դուն որ գուցե պիտի մեկնիս այս աշխարհեն,
Չճանչցած զիս . . . ,
Դուն որ գուցե օր մը տեսնեմ պիտի միայն,
Ճամբուս վրա, պատահական
Որպես անցորդ . . . ,
Դուն, որուն ես ընավ պիտի չհանդիպիմ,
Որու հոգին իր անունին պես անծանոթ
Պիտի մնա, իմ հոգիիս . . . ,
Դուն, որ գուցե հիմա մինակ
Կթափառիս անփութորեն՝
Ցավ մը գրկած հոգիիդ մեջ,
Եվ կամ գուցե,
Դուն որ հիմա կտապալիս զեխության մեջ
Հպարտորեն . . . ,
Եվ կամ գուցե,
Դուն որ հիմա ապաստանած ամրոցին մեջ քու մեծ «Ես»իդ,
Ոսկիներու դեղին ետեվ,
Հանդարտորեն ու անտարբեր կնայիս վար,
Ճամբաներու վրա քաղցե մեռնող մարդոց
Անող թիվին . . . ,
Ո՞վ իմ եղբայր, ո՞վ իմ ընկեր,
Ես խո՞սք ունիմ ականջներո՞ւդ քու պոռալու . . . ,
Ես ե՞րգ ունիմ հոգիիդ դեմ նվազելու,
Ունիմ բողո՞ք լեռնակուտակ,
Երակներո՞ւդ մեջ պարպելու:

— Ժամանակի ոտնածայնին ակա՞նջ տուր դուն.
Տիեզերքի չո՞րս ծագերեն, զիշերներու մեջեն ժայթքող

Խարույկներուն, ակա՞նջ տուր դուն:

Տե՛ս, գիշերներն առտո՛ւ դարձած . . . ,

Տե՛ս, ծառերեն վար կաթկթող հասունությունը աշունի . . . ,

Տե՛ս, հոգիներն իրա՛ր կապող՝ ճանապարհները Հարդ-Գողի . . . :

Ընկե՛ր, ընկե՛ր իմ անծանոթ,
Հիմա չորս-դիդ ու ամե՛ն տեղ,
Հողերեն վե՛ր, սրտերեն վե՛ր,
Սյունե՛ր, սյուներ մարմարակերտ,
Կրաքանականան:

Հիմա չորս-դիդ ու ամե՛ն տեղ,
Խենդ նժույզներն արեվատենչ մեր երազին,
Խավարեն ետք քարայրներուն,
Միջոցին մեջ կայծակնակե՛րալ կխոյանան:

Հիմա չորս-դիդ ու ամե՛ն տեղ,
Հողերուն տակ, սրտերուն մեջ,
Համառորեն,
Տե՛ս, կուռճանան, կխոշորնան ու կպայթին
Սերմերը սուրբ,
Երջանկության ոսկի ծառին:

Հիմա, հիմա՛, դեռ ամե՛ն տեղ
Կան ոսոխներ դարանակալ . . . ,
Դեռ կա արյուն ու մատնություն,
Ու անոնց դեմ, կան բազուկնե՛ր հերոսածին,
Ու կան կուրծքեր կրանիթյա:

Իսկ դուն ընկե՛ր, ո՛վ իմ եղբայր,
Ի՞նչ ըրիր դուն,
Ի՞նչ բերիր դուն քու հոգիեղ,
Գիշերներու մեջն ժայթքող խարույկներո՛ւն այդ անհամար.
Ի՞նչ դրիր դուն քու արյունեղ,
Աշուններու կենսապարզեվ հասունությանը այդ համար . . .

Ի՞նչ տվիր դուն քու բազուկեղ,
Հողերեն վեր, սրտերեն վե՛ր աշտարակվո՛ղ պալատներուն:

Ով իմ ընկեր,
Ուր են վերքերը քու անգին՝ հերոսությանց վկայություն.
Ուր են քու կուրծքը զարդարող շքանիշերը առնական . . . ,
Ուր է հոգիդ, ուր է սիրտդ,
Եվ ուր ես դո՛ւն,
Ով իմ դժբա՛խտ, ով իմ խեղճո՛ւկ, ով իմ անտե՛ր բարեկամ:

Ժամանակի ոտնածայնին ակա՛նջ տուր դուն . . . ,
Հոգիդ կրծող ցավիդ համար,
Ինձի՛ եկուր,
Զայն ինձի՛ տուր:

Ճահիճներեն ետք ամոթի,
Խարույկներուն դիմաց, ընկե՛ր,
Այրե՛ երեկը անիմա՛ստ ու ամայի:

Վա՛ր եկուր դուն ամրոցներեն,
Ուր քու ոսկիդ քեզ բանտարկե՛ր էր, իմ ընկեր,
Ու բանտարկած էիր ոսկի՛դ:

* * *

Ընկե՛ր, եղբա՛յր իմ անծանոթ,
Դուն որ հիմա այս աշխարհի վրա կապրիս,
Հեռու թե մոտ,
Դուն որ հիմա, գուցե հանդարտ կմահանաս,
Մահիճիդ մեզ սնդուսապատ . . . ,
Դուն որ գուցե քեզ կնետես
Կամուրջեն վար, զուրերուն մեզ . . . ,
Դուն որ գուցե հոգեվարքի տառապանքով
Կաթիլ-կաթիլ կվերջանաս՝
Ընկե՛ր, ընկե՛ր իմ անծանոթ,
Ի՞նչ թողուցիր այս աշխարհին,

Որպես վճար,
Քեզի տրված սրտին համար եվ ուղեղին,
Քեզի տրված,
Քեզ քարերեն ու անկենդան, լուռ տարրերեն
Զանազանող ուժին համար:

Ընկե՛ր, ընկե՛ր իմ անձանոթ,
Երկրի վրա դուն շարժեցար, ու զգացիր
Թե կզգայիր շարժի՛լդ քու...
Երկրի վրա տառապեցար,
Այս երկրեն մեծ տառապանքո՛վ մ'անձայրածիր:

Հողեն տարբե՛ր, քարեն տարբե՛ր, ջուրեն տարբե՛ր
Եղար ընկեր,
Դուն որ ամբողջ հողե՛, ջուրե՛ էիր միայն:

Պա՛րտքըդ, ընկե՛ր,
Պարտքդ կյանքին դեռ չտված ուր կմեկնիս:

Ժամանակի ոտնածայնեն վախցի՛ր, ընկեր:



ՀԱՅ ՏՂՈՑ

Հավերժին հետ ճամբա ելած, միայն այսօր մեզի հասնող,
Տղա՛ք, այս ինչ սարսուռ է նոր, այս ինչ պոռթկո՛ւմ ճաճանչաշող.
Ամե՛ն բազուկ կոհակ մ'է նոր, ամեն խոյանք՝ պայթո՛ւմ ու տենդ,
Ամե՛ն սրտի, ամե՛ն ափեն հորդող ծովի՛ն համար այս խենդ:

Ահա ջուրերն արագահոս, կանցնին անտառ, ծոր ու կղզի . . . ,
Երկիրն ամբողջ միակտուր օվկյանոսի՛ կվերածվի . . .
Զուրերն ահա կզալարվին ցնցումներով ահազնածայն,
Բայց երբ քաշվին, հողին վրա մարզարիտնե՛ր պիտի մնան:

Տղա՛ք, բերե՛ք բազուկը ձեր, բերեք հոգի՛ն արմենական,
Ու խառնեցե՛ք անպարտելի փոթորիկին այս սրբազան.
Ծիր-կաթինի ճամբով շաչող՝ նետին նման Հայկ Նախահօր,
Թող ըլլան շե՛շտ ու անպարփակ, ձեր ոստումները ամեն օր:

Թե կուտակվին ամպերը մութ, տղա՛ք, պետք է բալել համառ,
Փոթորիկին հետ փոթորկիլ, նույնիսկ իյնա՛լ փոթորկահար . . .
Տղա՛ք, պետք է Տա՛լ անպատճառ, որ կարենանք օր մանարզել
Մեր թոռներուն մատվըներով, մարզարիտներն այդ հավաքել:



ՄԱՂԹԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ

Նոյեմբեր 29-ի առիթով՝
Գրիգորի նորածին մանջուկին

Ով իմ տղա՛ս թանկագին,
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային։

Ո՞վ իմ տղաս,
Ինձմե մեկնած, ո՞վ իմ մասնիկըս անըսպառ,
Իմ շունչես՝ շունչ, իմ ծայնես՝ ծայն
Ու ծեփերես՝ ծե՛վ ստացած
Ո՞վ իմ տղաս,
Երազներուս եվ մարմինիս բաղադրումեն ծնած երա՛զ,
Ո՞վ իմ հոգիս,
Իմ ապագա՛ս։
Զիս Գալիքին ագուցող ծեռք,
Անցյալիս լույս տվող արեվ,
Զիս ինձմե դուրս, ինձմե անդին,
Ժամանակին տեր դարձնող՝
Ով իմ տղա՛ս ճանանչաշող,
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային։

Ո՞վ իմ տղաս,
Թուխ թե խարտյաշ,
Սեվ թե ներմակ,
Մահիճներու մեջ ոսկեզոծ ու բեհեզյա,
Կամ քուրզերու մեջ փաթաթված՝
Ո՞վ իմ տղաս,
Տենչանքներուս ոսկի՛ պտուղ,
Իմ ցավերուս վերջին կայան,
Երազներուս բացատրություն,

Ով իմ տղաս,
Ես տերդ քու,
Ու դուն տե՛րն իմ ապագայիս,
Իմ որպես մարդ գոյավորման իրավունքիս՝
Արդարացում . . . ,
Անմահության մեկ նոր մասնի՛կ զիս դարձնող,
Ո՞վ իմ մասնի՛կ մահկանացու,
Ով իմ տղաս՝
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային:

Իմ չհասած երազներուս ճամբուն վրա,
Դուն նոր ճամբորդ . . .
Չհազեցած ծարավներուս՝ շարունակող . . .
Դեռ անավարտ ծաղկանոցիս
Դուն պարտիզապան . . . ,
Իմ սերերուս միա՛կ վկան՝
Տղա՛ս, տղա՛ս իմ թանկագին,
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային:

Ո՞վ իմ տղաս,
Արեվներօ՛ւն հասնող տղաս բազմահանճար,
Բարձունքներեն վախցող տղա՛ս իմ միամիտ,
Ես հայրդ քու,
Չիս հա՛յր ընող,
Չիս հայրության գագաթներուն տանո՛ղ տղաս,
Իմ ծնունդես առնող ծնունդ,
Քու գոյությամբ իմ գոյության իմա՛ստ տվող,
Ո՞վ իմ տղաս, ո՞վ իմ տղաս՝
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային:

Իմ ցավերուս կուտակումեն
Խինդի՛ փոխված, ո՞վ իմ հին ցավ . . .

Դուն, ցավերուս իմ բանակեն որա՛կ դարձած
Ով փոքր տղաս . . . ,
Ես հայրդ քու,
Իմ մեջ իմ հայրն անգա՛մ մըն ալ ապրեցնող.
Իմ պապերուս թիվե՛ն ծնած,
Քու հայրն իսպա՛ռ գերազանցող՝
Ինձմե տարբեր, ո՛վ իմ տղաս,
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային . . .

Ու դուն ընդմիշտ, տղա՛ս, տղա՛ս,
Թող ունկընդրես,
Չեռքով, աչքով, շունչով, շուրթո՛վ
Զգա՛ս, տղաս,
Շեշտը անկեղծ,
Չելս իրական
Գույնը վճիտ,
Բույրն անըսպառ
Եվ համն անբիծ,
Խորհրդային նորակառույց այս աշխարհին.
Համերգներուն վիշապածայն ու գլգլուն,
Հողեն ժայթքող պալատներուն տուֆազանդակ,
Հարածիուն դրոշներուն բոսորագույն,
Տաշտեն հորդող ամենաբո՛ւյր խմորներուն,
Եվ տուն դարձող բանակներո՛ւն դափնեպսակ,
Զգա՛ս, տղաս:

Թո՛ղ թեվերուդ օղակին մեջ
Սեղմին մեկտեղ՝
Մարդերն ամեն, այս աշխարհի . . .
Թող սրտիդ մեջ
Աճին տենչերն անհունաթիվ,
Անհունաթի՛վ նոգիներուն . . .

Թող բարձրանան ականջներուդ,
Նո՞ւյն քաղցրությամբ՝
Երգերն ամեն երգիչներուն . . .

Թող բարձրանա նույն սաստկությամբ,
Բազուկու քու,
Ոսոխին դեմ ամեն գույնի
Ամեն մարդու:

Թող ծովափի ալիքին պես
Ըլլաս համառ ու աննկուն,
Ժայռերուն դեմ նպատակի՞դ ծովափերուն:

Թող մե՛ծ ըլլաս, այս դարի՞ն պես,
Եվ արժանի՝
Քու դեմ բացվող ճամբաներուն համայնական:

Թող քա՛ջ ըլլաս,
Թող գալարիս երկունքներո՛ւ ահագնությամբ՝
Այս դարի՞ն պես Խորհրդային:
Թող ըլլաս դեզ,
Ըլլաս անթեք,
Կամքին նման ու բազուկին,
Դյուցազններուն Խորհրդային:

Ո՛վ իմ տղաս,
Թող հա՛յր ըլլաս
Այս աշխարհի բոլո՛ր տղոց,
Որ մահես վերջ,
Ես անոնց մեզ
Վերածնիմ անթի՛վ տեսակ՝
Շեկ, սեվ ու թո՛ւխ կամ սպիտակ:

Ո՛վ իմ տղաս,
Եկար աշխարհ,
Հաստատումեն ետք Կարգերուն Խորհրդային . . . ,
Թող չմեկնի՛ս,
Զիս արժանի չըրած, հոգի՛ս,
Քեզմով՝ գալիք, ալ անըսպա՛ռ իմ սերունդիս:

Ն Ո Ր Ն Ո Ր - Տ Ա Ր Ի Ն

Գ. Մ.-ին

Կեցած ահա քու դեմ նորեն,
Ո՞վ Նոր-Տարի,
Ժամանումեղ պահիկ մ'առաջ
Կմտածեմ:

Տասնըերկու հավերժներո՛ւ տեվողությամբ,
Կարոտն ամբողջ ամիսներուն տասնըերկու,
Վայրկյաններու անկըրկնելի ոստումներով՝
Հանդիպումի՛դ զիս կտանի:

Քեզ այս տարի, ո՞վ Նոր-Տարի,
Ես կսպասեմ կարոտագին ու անձկությամբ:

Փոխված եմ շա՛տ,
Եմ հետ փոխված աշխա՛րհն ամբողջ:

Ես այս տարի, երբ խցիկես դուն մտնես ներս,
Ունիմ կրա՛կ՝ ցուրտերուն դեմ քեզ պահելու . . . :
Ես այս տարի,
Երբ մտնես ներս երակներես,
Ունիմ արյուն՝ քեզի տալու . . .

Քե՛զ այս տարի, ո՞վ Նոր-Տարի,
Ես դարերով սպասեցի:
Արյունիս մեջ, արյունը իմ նախնիքներուն՝
Սպասումին կապրի մասնի՛կն իր վերջնագույն . . . :
Ո՞վ վայրկյաններ, անցեք արա՛գ,
Երկվայրկյաննե՛ր, ժամացույցեն անջատվեցեք ավելի՛ շուտ . . . ,
Դարձի՛ր սլաք . . .
Ուր ես, ո՞ւր ես, ո՞վ Կես-Գիշեր:

Ես այս տարի, ո՛վ Նոր-Տարի,
Նոր աչքերով կսպասեմ քեզ:
Ռազմի դաշտին վրա անգութ,
Աչքերն իսպառ փակող անթիվ հերոսներուն
Հայացքը սուրբ, աչքերուս մեջ՝
Ահա արդեն, ժամանում իդ ճառագայթով .կրոնկի:

Ով Նոր-Տարի,
Նո՞ր եմ եվ ես,
Ինչպես աշխարհը այս տարի...

Ով դուն անիմլի ամենակա՛ր ժամանակին,
Դարձիր արա՛գ,
Լոկ անգամի՛ մը համար գեթ...
Ի՞նչ փույթ, եթե խուրծ մ'ավելի արագությամբ
Մազերուս մեջ իմ ճերմկի...,
Ի՞նչ փույթ, եթե քայլ մ'աւելի ես հեռանամ
Իմ ծնունդես,
Արագությա՛մբ մը ավելի :

Հոսե՛, սուրա՛, ով իմ արյուն,
Արա՛գ, արա՛գ,
Ու սույրիդ մեջ, ա՛ռ քեզի հետ, արագացո՛ւր,
Երթը դանդաղ վայրկյաններուն...:
Ուր ես, ուր ես, ով Կես-Դիշեր...,
Այս որքան մեղմ ու համրագին կերթեվեկեն
Ժամանակի մեքենային թույլ մխոցներն անմերձելի:
Որքան երկա՛ր կտատամսի
Ներկան՝ անցյա՛լ դեռ չդարձած...:
Վայրկյաններու միջեվ լայնցող հետզհետե,
Ժամանակին մաս չկազմող՝
Ինչո՞ւ պարապն այս անկենդան :

Դարձիր սլաք,
Կարոտն իմ մեջ, պիտի հիմա պայթի ահա,
Բյուր դարերու ահագնությամբ...:

Ով Նոր-Տարի,
Հոգիս ահա, մտածումիս պողթկումներով,
Կոտրած շղթան ժամանակին,
Վայրկյաններու դեռ համեցող շարաններուն վրային թույլ,
Աստումներով կխոյանա, ու կհասնի ահա քեզի' . . . ,
Մինչ իր ետին,
Մարմինը իմ, եվ սլաքներն այս աշխարհի,
Ժամանակի թաթին հլու՝
Դեռ կսպասն Կես-Գիշերին:

Ներկա՛, փրթի՛ր ալ Դալիքեն . . .
Անցյա՛լ, տե՛ղ բաց իմ Ներկայիս մասնիկներուն . . .
Ու դուն, թմբո՛ւկն ականջներուս,
Դեռ չհնչած՝
Հսե՛ վայրկյանն այս վայրկյանին հաջորդելիք . . .
Ուր ես, ուր ես, ով Կես-Գիշեր:

* * *

Հասավ մարմինս շնչասպառ՝ մտածումիս . . .,
Ու . . . Կես-Գիշեր:
Բայց արդեն դուն սկսած ես, ով Նոր-Տարի . . .
Իմ մեջ լույսեր կբոցկլտան, ու ձայներ տաք,
Կկազմեն մաս՝ նվազներու նորօրինակ:

Ծառերն ահա, անըսպասված սլացքներով
Կրարձրանան հողերեն վեր
Կամար-կամար,
Ու կկապեն պտղաստաններն այս աշխարհի,
Մեկզմեկու:

Ենճույքն ահա, ուր ամեն մարդ է կոչնական,
Ուր ամեն թաս նույն գինիով կպղպջա,
Ուր ամեն ծեռք
Նույն զերմությամբ կմոտենա
Ամեն ծեռքի,

Ով Նոր-Տարի,
Տե՛ս, կսկսի խնճռւյքն ահա:

Շուրջպարն արդե՞ն է սկսած . . . :
Տրուին աճող ոտնածայնին պարողներուն գերերջանիկ,
Շեփորի պես կթափալի:

Դանդաղորեն ու անընդհատ,
Չորս ծագերեն այդ խնճռւյքին,
Խումբ-խումբ մարդեր,
Կմիանան պարողներուն:
Օղակն ահա, ամեն րոպե, շառավիղն իր
Մոլեգնորեն կընդարձակե:
Լեռներ, ծովե՛ր ու երկիրներ օղակին մեջ,
Կհեռանան,
Կնույնանան:

Նվազն է նո՛ր, նվազն է խո՛ր, հոգեպարար . . . ,
Պարն է հուժկու, տենդն ամենի՝
Պարողներու հոգիին մեջ:

Մարդե՛ր, մարդե՛ր ամեն կողմե,
Երջանկաբեր միավորման կեղրոնածիգ ուժին հլու,
Մազնիսացած՝
Կմիանան այդ շուրջպարին:

Օղակն արդեն, երկրագունդի իրանին շուրջ,
Զայն կսարսե իր առանցքեն:

Մարդե՛ր, մարդե՛ր ամեն կողմե
Շրջանակի շառավիղին կուտան հասակ . . .
Երկիրն ամբողջ նույն սարսուռով է դողահար:

Եվ օղակն այդ,
Կըլլայ գոտի,

Կըլլայ ուկի՛ Հասարակած
Երկրագունդի հսկա մեջքին
Ու զայն առած իր անպարփակ թափալքին մեջ,
Անհունության ճամբաներով լուսաբարախ՝
Կառաջնորդե նո՞ր ուղղությամբ:

* * *

Ո՞վ Նոր-Տարի,
Տարբե՛ր ես դուն անցյալի Նոր-տարիներես,
Որովհետեւ տարբեր եմ ե՞ս:

Փա՛ռք առհավետ,
Աշխարհն ու զիս Փոխողներուն երանավետ:

ՅԱՅՐԵՆԻ ՔԻ

Դարե՛ր առաջ, օր մը կարծես, այնտե՛ղ ծնած ըլլայի ես,
Օր մը անոր արեվին տակ ապրած, շնչա՛ծ ըլլայի ես,
Անոր անբավի բարիքներեն բաժի՛ն առած ըլլայի ես
Սակայն հանկարծ, տարահալած, անկե մեկնա՛ծ ըլլայի ես:

Եվ բյուր դարեր, խավարի մեջ կարծես թմրած ըլլայի ես,
Նկուղներու գեցության մեջ, մաշած, հյուծա՛ծ ըլլայի ես,
Գլուխս կախ, օտարին դեմ, ընդմիշտ լուա՛ծ ըլլայի ես,
Սակայն այսօր, կարծես հանկարծ ապստամբա՛ծ ըլլայի ես:

Ահա ճամբան ասպնջական, ուրկե անցա՛ծ ըլլայի ես,
Նույնիսկ ահա հոգի՛ն անուշ, որ հոն սիրա՛ծ ըլլայի ես,
Ահա երգեր, որոնք կարծես այնտեղ երգած ըլլայի ես,
Որոնք սակայն, երկա՛ր դարեր, այստեղ մոոցած ըլլայի ես:

Սակայն հիմա, թեեվ այստեղ, սակայն այնտե՛ղ ըլլայի ես,
Թեեվ երկա՛ր ճամբան անցած, բայց չհոգնած ըլլայի ես,
Կարծես նորեն իմ հին «ես»իս վերադարձա՛ծ ըլլայի ես,
Եվ աշխարհի բոլո՛ր մարդոց ձեռքեն բոնա՛ծ ըլլայի ես:

ԿՅԱՆՔԻ ՃԱՄԲԱՆ

(ԵՐԵԿ)

Պատանությունըս իմ անցավ, ինչպես ամե՞ն զեղեցիկ բան,
ինչպես ամեն ցավ ու ժպիտ, պատանությունըս իմ անցավ . . . ,
Մնացի ես, ետիս պարապ, առջիս կյանքի դաժան ճամբան,
Առջիս հույսեր մշուշապատ, եվ անհամար խարկանք ու ցավ:

Ի՞նչ ըրի ես, Պատանություն, ըսե՛, քեզմով ի՞նչ ըրի ես,
Ի՞նչ ըրի ես առիթներով ու խենդությամբ քու անսահման . . . ,
Ինչո՞ւ այսպես հանկարծորեն, դուն ցատքեցիր իմ վրայես,
Ինչու մինա՛կ զիս թողուցիր, ներկայիս հետ դեմ-հանդիման:

Պատանությո՞ւն, վատնեցի քեզ. քեզմե ոչի՞նչ մնաց ինձի,
Քեզմե ոչինչ, որու հենիմ, որու հենած դիմեմ վաղվա՞ն . . .
Իմ երեկի կրակներես ոչ-մեկ կրա՛կ ես պահեցի,
Ոչ-մեկ կրակ՝ այս ներկայիս ծմեռներուն դեմ տխրական:

Ո՞ւր է վախճանն այս ճամբային, ինչպե՞ս նայիմ այսօր վաղվան.
Իմ երազիս ո՞ւր է ճամբան, ուրկե անցա խեղճ ու անշող . . .
Ամայություն՝ անցած ուղիս, ներկաս անլույս, եվ ապագան՝
Ամայությո՞ւն, իմ անցյալի ամայությա՞ն զիս շղթայող:

(Այսօր)

* * *

Պատանությունըս իմ անցավ, ցավով, մութով տրտմագալար,
ինչպես ամեն վատնվող բան, պատանությունըս իմ անցավ . . .
Սակայն այսօր, ո՞վ իմ Երկիր, ինձի համար Անցյալ եղար,
եղար աննենգ պատանություն, եվ Ապագա՝ ամենաբավ:

Ինձի համար, ո՞վ իմ Երկիր, զառիվերներ դուն բարձրացար,
եվ անհաշիվ սպառեցիր հետին կաթիւը քու ճիգին . . .
Ինձի համար Զարիքին դեմ պայքարեցար հերոսաբար,
Ու դուն հերոս զիս դարձուցիր, հերոսությամբ քու թանկագին:

Այսօր կանցնիմ կյանքին մեջեն, կուրծքիս պատվո շքանշան,
Ու ոտքերուս՝ փոշին խարդախ գերմանական ճամբաներու . . .
Լենինկրատի հերոսներուն արյունն իմ մեջ կընե շրջան . . .
Այսօր կանցնիմ, սրտիս տենդեր, շուրթիս երգե՛ր բազմալեզու:

Այսօր ահա, կրազմանամ ու կհորդիմ ես հաղթական,
ինչպես հուռթի ցորենի արտ, ինչպես բանակ հայրենապանձ,
Այսօր իմ մեջ ես կշատնամ, կըլլամ միլյոն՝ մեկի՛ փոխան,
Ու միլյոնին մեջ բարախուն, արյուն ու սի՛րտ հասարակաց:

Իմ դեմ ահա, կածանն այս մութ, պողոտայի կայլափոխվի,
եվ հյուղակներ կառաջնորդեն պալատներու սեմերեն ներս . . .
Ցնծա՛ Հոգիս, ցնծա՛, կանչե՛ . . ., այսօր Տո՛նն է Աշխատանքի . . .
Թող վերելքի ու կառուցման ծայներ թնդա՛ն իմ երգերես:

Եկե՛ք մարդեր, Աշխատանքի շքատոնին այս պատվական,
Եկեք բահով, մուրճով, գրչով, գերանդիով պողպատաշեն . . .,
Տուն եվ Սերունդ, Կալ ու Տաճար օրհնության պես թող բարձրանան.
Եկե՛ք մարդեր, Երջանկության կենսապարզե՛վ այս ճամբայեն:

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐԻՆ

Հայրենիքի մը չափ աղվոր ես, ի՛մ աղվոր,
Ու Հայրենիքի մը չափ գեղեցիկ.
Երեվանին չափ հեռու ես, ի՛մ աղվոր,
Ու Երեվանին չափ մոտիկ:
Քու բառերդ զիս լույսերո՛ւ կտանին,
Ինչպես թանձր խավարներու գաղտնիքին:
Դուն գեղեցիկ ես քերթվածի մը պես,
Դուն բարի ես զեփյուռի մը պես,
Մինչ օրն իբուն կտանջես
Զիս ու քեզ,
Մինչ դուն ա'յնքան, ախ, այնքան բարի ես:

Ես քեզ գտա մաքուր ու ժպտերես,
Գարնան ծոցեն բարձրացող ծիլի՛ պես.
Ես քեզ գտա կա՛րծր ու հաղթական,
Հայրենիքեն եկող ուազմի ճիչի՛ն պես:
Ես քեզ գտա ամե՛ն տեղ, ամե՛ն ժամ,
Իմ անձես բարձրացող երգի՛ պես,
Խինդի՛ պես, վրեժի պես:

Դուն Հայրենիքի մը չափ աղվոր ես, ի՛մ աղվոր,
Ու Հայրենիքի մը չափ անսահման...
Դուն կապույտ ես, կանա՛չ ես, կարմի՛ր ես,
Հայրենիքեն եկող նամակի՛ մը պես:
Դուն տա՛ք ես, ուժո՛վ ես, մե՛ծ ես,
Հայրենիքեն վերադարձող եղբո՛ր մը պես:

Կսիրեմ քեզ աշխարհի՛ մը չափ,
Դարերեն ինձի՛ հասնող՝ աշխարհի՛ մը չափ...:
Կսեղմեմ քեզ կուրծքիս ոսկետառ գրքի մը պես,

Ու կկարդամ, կկարդա՞մ քեզ,
Մութի՛ մեջ թե լույսի մեջ:

Դուն հի՛ն ես, ու նո՞ր, ու անհատնում՝
Աիրտե-սիրտ երկարող սիրո կանչերո՛ւն պես,
Աշխարհը միավորող հազարաթեվ այս ճամբռ'ւն պես . . .

Դուն եղած ես ու կա՛ս, այսօր ավելի՛ շքեղ,
Արեվին լո՛ւյս տվող այս նոր արեվի՛ն տակ,
Այս նոր արեվով հորդուն, այս նոր երկինքի՛ն տակ:

Դուն եղած ես ու կա՛ս,
Տիեզերքին շարժում տվող օրենքներուն պես,
Հոգիին սարսուռ տվող այդ աչքերուն պես . . . ,
Ու դուն աղվո՛ր ես, աղվո՛ր,
Հայրենիքեն եկող ամե՛ն բանի պես . . .

Դուն իմ Հայրենի՛քս ես:



ԵՐԵՎԱՆ

Շողի փունջ ես, կռւյսի շունչ ես, սյուքի հունչ ես, Երեվան,
Համակ տաղ ես, գարնան խաղ ես, արծաթ շաղ ես, Երեվան,
Վաղվան հույս ես, հույսի լույս ես, չնաշխարհիկ ոսկի բույս ես,
Համակ թույր ես, անհուն բույր ես, աստղի հույլ ես, Երեվան:

Հանկարծ ոռւմբ ես, ոսոխին դեմ՝ լե՛ռ ես, թումբ ես, Երեվան,
Սակայն խունկ ես, նոր շշուկ ես, ու խնդուք ես, Երեվան,
Զուրի երգ ես, խենդ պարերգ ես, հերոսական խոփի հերկ ես,
Համակ կանչ ես, զով կանաչ ես, սարալանջ ես, Երեվան:

Մրգաստան ես, այգեստան ես, նոր ոստան ես, Երեվան,
Գինարբուք ես, ու խնճույք ես, նոր հաճույք ես, Երեվան,
Այս սառնաղեմ դարերուն դեմ, դուն ժպտաղեմ նո՛ր հսկան ես,
Դուն նոր զիրք ես, ու երազված սիրո զիրկ ես, Երեվան:

Տաղ ես, խաղ ես, ոռւմբ ես, թումբ ես, ամե՛ն բան ես, Երեվան,
Դուն մեր Վաղն ես, Ապագան ես, նոր ճամբան ես. Երեվան,
Վերջին հույսն ես, անվերջալույս արշալույսն ես, Երեվան,
Մենք անտեր ենք, թափառական, դուն մեր Տե՛րն ես, Երեվան:



ԽՈՐԴՈԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ Ս

Քեզ սիրեցի սիրտո՛վ, միտքո՛վ ու ափերով գաղթականի . . . ,
Երազներուս մեջ՝ իրական, ու կյանքիս մեջ եղար երա՛զ . . . ,
Քեզ տաքցուցի իմ արյունով, քո՛ւ արյունեղ առի հոգի՝
Որ ինձի հետ, ո՞վ իմ երկիր, դուն ալ փայլիս եվ ուռնանաս:

Ցավերուս մեջ, դուն լսվեցար կարկաչանոս երգի մը պես,
Զիս լեցուցիր հպարտությամբ, անվերջ դիզվող բերքի մը պես,
Եղար հսկա, եղար անհա՛ս, երկինք տանող ելքի մը պես,
Ու պարպեցիր դուն իմ հոգիս, աստղեր ժայթքող վերքի մը պես:

Քեզ ցանկացի աչքով. ջիղով ու երակո՛վ գաղթականի . . . ,
Տեսիլքիս մեջ առիր մարմին, մարմինիս մեջ եղար պայթում . . . ,
Մինչ հացի պես թա՛րմ ու արդար, շրթունքներուս իմ անոթի՝
Դրիր դուն հա՛ցն իմաստութեան, անանձնակա՞ն ու անհատնում:

Խավարին մեջ կայծկլտացիր հավատարծարծ կանթեղի՛ պես,
Եղար կաղնի, որուն հոգիս փաթթվեցավ բաղեղի պես,
Հանկարծ եղար՝ մարտաշառաչ ու աննվաճ հեղեղի պես,
Ու լարվեցար Զարիքին դեմ, պողպատակուռ աղեղի պես:

Քեզ փնտոեցի լույսով, երգով ու կանչերո՛վ գաղթականի . . . ,
Քեզի համար, ինչ որ ունիմ, պահեցի լույծ ու անարատ . . . ,
«Ուրիշ»ներու հեգնանքին դեմ իմ մերկությամբ չդողացի՝
Որ բեհեզզովն ապագայիս, զարդարեի քո՛ւ ապագադ:

Ես քեզ գտա արդեն ծանոթ, տաք ու բարի հուշի մը պես,
Ողողեցիր, ինչ որ ունիմ, ոսկեթաթախ մշուշի պես,
Օտարներու նայվացքին դեմ՝ դուն կանգնեցար փուշի մը պես,
Սակայն իմ մեջ, որոտացիր, աշխարհ ցնցող ուժի՛ մը պես:

Այսօր ազատ, այսօր հպարտ, դեպի քեզի՛ կուգամ ահա,
Հերկերուդ մեջ, իմ խենդ հոգիս, ես ցանելո՛ւ կուգամ ահա,
Մարգարտահոս գետերուդ հետ, ես հոսելո՛ւ կուգամ ահա,
Սերըս անձրեվ՝ ակոսներո՛ւդ ես բաշխելու կուգամ ահա:

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳՍ ՎԵՐՁԻՆ

Առաջին Կարավոնին առիթով

Դուն, Հայաստան, մեր ցավն էիր, այսօր մեր խինդն ես անըսպառ,
երեկ անկյանք ու մահամերձ, այսօր մեր կյանքն ես անըսպառ,
ես քու որդիդ՝ գրիչըս իմ, թաթխեմ լույսիդ անապական,
Մեր դարերու սպասումին մութեն ծնած՝ լույս Հայաստան:

Հաղթ գետերուդ կանչն է ահա, արյունիս հետ կթավալի,
Սուրբ հողերուդ դողն է ահա, մարմինիս մեջ կծավալի,
Հողերեղ՝ նյութ, երկինքեղ՝ գույն, զուրերեղ խոսք առած ահա,
Մարմինիդ հետ, մարմինըս իմ, դեպի արելվ կխոյանա:

Երկիր իմ նոր, երազ իմ հին, իմ մեջ ես զի՞ս զտա կրկին,
Իմ մեջ ես՝ քեզ, քու մեջ ես՝ զիս, ամբողջովին զտա կրկին...
Դուն՝ լայնցող ծով, ես՝ հորդած գետ, ծոցերեն ետք օտարներու,
Քու ափերուդ կուգամ կրկին, թե՛ զիս եվ թե քեզ ըլլալու:

Քեզ, Հայաստան, իմ հետ տարի, հոն ուր տարի այս խենդ հոգիս,
Ու ես այնտեղ գացի միայն, ուր դուն տարիր իմ խենդ հոգիս...
Ես՝ սոսկ տարթում, ու դուն՝ միջոց, ես՝ կյանքի-տենչ, դուն՝ ժամանակ,
Ես նյութ, դուն՝ ձեվ ու գույն ու խորհ, ես՝ պարզ ձգտում, դուն՝ նպատակ:

Մենք, Հայաստան, քու ցավն էինք, այսօր քու խինդն ենք անըսպառ,
Երեկ հեռու եվ մոլորուն, այսօր քու մոտն ենք ալ խսպառ...
Ես քու որդիդ, գրիչըս իմ թաթխեմ կարմի՛ր քու ներկային,
Ես քու որդիդ, փակեմ իսպա՛ռ, զաղթականի երգս վերջին:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ հրճվանքիս չափ իրավ, ու ցավերուս չափ անհուն,
Աշխարհին դեմ կոթողվող ծշմարտություն անանուն.
Իմ երեկիս վրա մութ՝ փայլող կամար ոսկեման,
Ով իմ երկիր լուսածին, Սովետական Հայաստան:

Մասիսին պես փորձառու, Արարատին պես կայտառ,
Ու Սեվանով քաղցրացած Իմաստություն անըսպառ,
Հարցումներուս դեմ անթիվ՝ լայնցող երկինք անսահման,
Ով իմ երա՛զ երկնագոյն, Սովետական Հայաստան:

Անցյալին մեջ՝ վերջալույս, Գալիքին մեջ՝ այգաբաց,
Ամայքեն վերջ լոռւթյան, դուն եռուզե՛ռ անիմաց,
Կարոտին դեմ ափերուս՝ ժպտող անծի՛ր պտղաստան,
Ով իմ Աշխա՛րհ կենսավետ. Սովետական Հայաստան:

Տենչանքներուս համար՝ զահ, զերմիս համար՝ գգվող ծեռք,
Անհուսության ճամբուս մեջ, համայնակա՛ն Բարեվերգ.
Ոտնածայնիս դեմ հոգնած՝ բացվող զերմի՛կ ապաստան,
Ով իմ Կայա՛ն դուն վերջին, Սովետական Հայաստան:

Ավելի վառ՝ քան հոգիս, սո՛ւրբ՝ երազես ավելի,
Հերոսներու արյունով շահված Պատգամ անհեղի.
Եսությանց դեմ այլամերժ՝ դուն նոր պատվար անսասան,
Ով իմ Պաշտպա՛ն ու Եղբայր, Սովետական Հայաստան:

Ա Ր Ա Զ Ն Ո Ր Ո Ւ Ի Ն

Նորեն քեզի՛ մտածելով, հավատալո՛վ քու զորության,
ևս զիս զորե՛ղ կզգամ նորեն, հավատալով քու զորության . . . ,
Քեզմով լեցո՛ւն, քեզմով հարո՛ւստ, վստահելո՛վ քու բարության,
ևս զիս բարի կզգամ նորեն, վստահելո՛վ քու բարության . . .
Դուն պահապանն անպատմելի երազներո՛ւն ու մեր կալին,
Քեզի մաղթե՛րդ համայնական, քեզի օրիներդ, Մե՛ծ Ստալին:

Ահա մարդոց ես կդիմեմ որ ունկընդիր ըլլան խոսքիդ,
Որ ցավերուն համար իրենց, գա՛ն, ունկընդիր ըլլան խոսքիդ,
Որ հավաքվին քու ձայնիդ շուրջ, որ խումբերո՛վ ուղղվին քեզի,
Իրենց անտեր դատի՛ն համար, տե՛ր փնտռելու ուղղվին քեզի . . .
Երջանկության դեռ չբացված հին դուռերուն նո՛ր բանալին,
Քեզի գեղո՛ն ու ցնծություն, քեզի պատիվ. Մե՛ր Ստալին:

Թող վախկոտներ քաշվին մեկդի՛, այս դարը մեծ պայքարի՛նն է,
Շատե՛ր, շատե՛ր պիտի շիջին, ծագող արեվը մերի՛նն է,
Սերունդներուն համար զալիք՝ իյնալ, զոհվիլ մեր՝ բաժի՛նն է,
Գիտե՛մ, այս դարն է ալեկոծ, ալեկոծվիլ մեր բաժի՛նն է . . .
Մեր ներկայո՛վ մեզ զրահող, ու տե՛ր կանգնող մեր Անցյալին,
Քեզի գարո՛ւն մշտանորոգ, քեզի ժպի՛տ, ձա՛ն Ստալին:

Ինչո՛ւ ապրիլ այս կյանքին մեջ, եթե ստրուկ պիտի մնանք,
Վաղով ինչպե՞ս խանդավառվիլ, եթե ստրուկ պիտի մնանք,
Ինչո՛ւ հորդող ամբարին դեմ մենք անոթի պիտի մնանք,
Խինդը մարդոց իրավունքն է, անմաս ինչո՛ւ պիտի մնանք . . .
Դուն մասնակից մեր ըոլորին նո՛ր խինդերուն ու հին ցավին,
Քեզի շատ կյա՞նք ու առավոտ, քեզի արեվ, Հայր Ստալին:

Ահա արդեն ես կլսեմ խլրտումներ ամեն կողմե,
Աշխարհը հին կսասանեն փլուզումներ ամեն կողմե,
Այս դարը նոր, այս դարը մեծ, այս դարը վե՛հ պիտի ըլլա,
Մարդուն մարդե՛ն կեղեքումին՝ այս դարը վե՛րջ պիտի ըլլա . . .
Արեվին տակ, դուն անըսպառ ու Կարելի՛-Անկարելին,
Քեզի պաշտո՛ւմ ու գուրգուրանք, քեզի հավերժ, Լո՛ւյս-Ստալին:



ՆՈՐՅԱ ՀԵՂԻՆԱԿԵՆ՝
ԵՍ ԵՒ ՄԱՐԴԻԿ
(ՔԵՐԹՎԱԾՆԵՐ) 1943

ԿՈՂՔԸ ԳՏԵՑ

ՎԱՀԵ ԳԵՐՄԱՆԻԿՅԱՆ


ԱՅՍ ԳՐՁԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԵՎԱԿ 6-3-1947ԻՆ

գԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՄ. ԳՐԱԴ.



220028566



10 ₣

ՀՐԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԵԼՔՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ
ՀԱԼԵՊԱՀԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐ «ԴԵՊԻ ԵՐԿԻՐ» ԹԻՒ 5

ԳԱԼՈՒՍՈՒՆ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՖՐԱՆԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ ՀԽՆԳ ՇԽԱՆ

ՀԱՍՑԵ

Զ. ՄԵԼՔՈՒՆՅԱՆ

c/o ՏՊԱՐԱՆ ՏԵՐ-ԱՆՁԱԿԵԱՆ

ԹԻԼԵԼ ՓՈՂՈՑ ՀԱԼԵՊ-ՍՈՒՐԻԱ

ز. ميلكونيان

مطبعة دير سحاكيان

شارع القلل — حلب — سوريا